Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հուլիսի 25-ի N 1143 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով ամրագրված նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Գնահատման և փորձաքննության ենթակա՝ Ա, Բ կատեգորիայի նախատեսվող գործունեության տեսակների նախագծային փաստաթղթի և ՇՄԱԳ հաշվետվության գնահատման և փորձաքննության գործընթացներն իրականացվում են օրենքով սահմանված ժամկետներում և ընթացակարգով:

2. ՇՄԱԳ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

3. Օրենքով սահմանված նախատեսվող գործունեության տեսակ հանդիսանալու կամ ՇՄԱԳ-ի ենթակա նախատեսվող գործունեության տեսակի (ըստ կատեգորիաների) դասակարգման վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով, մինչև ՇՄԱԳ գործընթացի սկսելը, նախաձեռնողը կարող է գրավոր դիմել լիազոր մարմնին՝ ներկայացնելով նախատեսվող գործունեության ընդհանուր բնութագիրը (վայր, տեսակ, ծավալ, հնարավոր ազդեցություն):

4. Լիազոր մարմինը սույն կարգի 3-րդ կետով պահանջվող պարզաբանումը գրավոր տեղեկացնում է դիմումատուին՝ դիմումն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Նախագծային փաստաթղթով նախատեսված լուծումների այլընտրանքային տարբերակների բացահայտման նպատակով դիտարկվում են հնարավոր այլընտրանքային, այդ թվում՝ զրոյական՝ նախատեսվող գործունեության չիրականացնելու տարբերակները: Այլընտրանքները պետք է ներառեն այլընտրանքային վայրերի, տեղադիրքի, երթուղիների, տեխնոլոգիաների, գործընթացների, հումքի, նախագծային և շինարարական աշխատանքների լուծումների, բնապահպանական և սոցիալական միջոցառումների նկարագրություններ: Նախընտրելի տարբերակի ընտրությունը հիմնավորելու նպատակով իրականացվում է նախատեսվող գործունեության նախընտրելի տարբերակի և այլընտրանքային տարբերակների բնապահպանական և սոցիալ-տնտեսական համեմատական վերլուծություն:

6. ՇՄԱԳ գործընթացում նախաձեռնողը կարող է գրավոր դիմել լիազոր մարմնին՝ գնահատման գործընթացի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով:

7. Լիազոր մարմինն իր լիազորությունների շրջանակներում սույն կարգի 6-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը գրավոր տրամադրում է դիմումատուին՝ դիմումն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԵՏՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

8. Նախաձեռնողը, իր լիազորությունների շրջանակում իրականացնում է մշտադիտարկում (մոնիթորինգ)՝ համաձայն նախատեսվող գործունեության բնապահպանական կառավարման պլանի և մշտադիտարկման ծրագրի՝ շրջակա միջավայրի՝ ներառյալ մարդու առողջության վրա ազդեցությունների հետևանքով առաջացող հնարավոր փոփոխությունները կանխատեսելու նպատակով:

9. Մշտադիտարկման տարեկան արդյունքների, նախատեսվող գործունեության նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության տվյալների համեմատական վերլուծության արդյունքում նախաձեռնողի կողմից կազմվում է հետնախագծային վերլուծության տարեկան ծրագիր, բացառությամբ սույն կարգի 11-րդ կետի:

10. Յուրաքանչյուր տարվա մինչև փետրվարի առաջին տասնօրյակը մշտադիտարկման և հետնախագծային վերլուծության արդյունքները հրապարակվում են

նախաձեռնողի կայքում (առկայության դեպքում) կամ տրամադրվում են լիազոր մարմնին՝ վերջինիս կայքում տեղադրելու նպատակով:

11. Գործունեության կոնկրետ տեսակների կամ օբյեկտների մշտադիտարկման համար օրենսդրությամբ հատուկ ընթացակարգեր սահմանված լինելու դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել հատուկ սահմանված ընթացակարգերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

25.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ